



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՍ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ

ՅԻԱՆԱԿԻ ՎԵՃԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Տնօրհմէքի աւանդութեան շուրջ	Էջ 3
Ուսուցում շնուրթեան մասին	Էջ 4
Ուսուցում ապահարգանքի մասին	Էջ 7
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԵՆ (41.4-14)

Այսպէս կ'ըսէ Տէրը.-
«Ո՞վ ըրաւ, ո՞վ իրականացուց այս բոլորը, ո՞վ որոշեց պատմութեան ընթացքը, եթէ ոչ ես՝ Տէրս, որ անոր սկիզբը դրի եւ զայն կը ղեկավարեմ մինչեւ գալիք յաւիտեանը: Հեթանոսները զիս տեսան եւ վախցան, հեռաւոր ազգեր իրենց սարսափէն մօտեցան, իրարու քով եկան: Արհեստաւորներ որպէս ընկեր ու եղբայր զիրար քաջալերեցին, հիւսնը ոսկերիչին օգնեց, ձուլագործը՝ դարբինին: Իրարու ըսին. «Լաւ եղաւ այս օգնութիւնը», եւ կուռքերը իրենց տեղը գամեցին, ամրացուցին այնպէս՝ որ չչարժին: Բայց դո՛ւն, Իսրայէլ, դուն իմ ծառաս ես, ո՞վ Յակոբ, ե՛ս քեզ ընտրեցի, ո՞վ սերունդ Աբրահամի՝ զոր սիրեցի. քեզ աշխարհի չորս ծագերէն բերի, աշխարհի հեռաւոր անկիւններէն քեզ կանչեցի, ըսելով. «Իմ ծառաս ես դուն»: Ընտրեցի քեզ, որովհետեւ իմ ընտրածս ես դուն: Հետեւաբար մի՛ վախնար, ես հետդ եմ. մի՛ շփոթիր, քու Տէր Աստուածդ եմ ես. պիտի զօրացնեմ քեզ, պիտի օգնեմ քեզի եւ իմ աջովս պիտի պահպանեմ եւ արդարացնեմ քեզ: Ահա քու բոլոր հակառակորդներդ պիտի ամչնան ու գլուխներն կախեն, իսկ քեզ ամբաստանողները պիտի կորսուին ու չքանան: Պիտի փնտռես բայց պիտի չգտնես

«Մի՛ վախնար, պիտի օգնեմ քեզի»:

անոնք՝ որ քեզի թշնամութիւն ըրին, պիտի չքուին, գոյութենէ պիտի դադրին քեզի դէմ պատերազմողները: Որովհետեւ ես՝ քու Տէր Աստուածդ, քու ձեռքդ բռնած եմ եւ քեզի կ'ըսեմ. «Մի՛ վախնար, պիտի օգնեմ քեզի»: Մի՛ վախնար, ո՞վ Յակոբի մնացորդ, փոքրաթիւ Իսրայէլ, ահա ես կ'օգնեմ քեզի», - կ'ըսէ Իսրայէլի Սուրբ Աստուածը, որ քեզ պիտի փրկէ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (7.11-25)

Գիտենք թէ Ղեւտացիներու քահանայութիւնն էր հիմը սրբութեան այն օրէնքին որ Իսրայէլի ժողովուրդին տրուեցաւ: Արդ, եթէ կարելի ըլլար այդ քահանայութեան միջոցաւ կատարելութեան հասնիլ, Աստուած ի՞նչ պէտք պիտի ունենար նոր քահանայապետ մը տալու Մելքիսեղեկի օրինակով եւ ո՛չ Ահարոնի քահանայութեան շարունակութենէն: Միւս կողմէ, քահանայութեան փոխուելուն հետ սրբութեան օրէնքն ալ պէտք էր փոխուէր. որովհետեւ Քրիստոս, որուն մասին կը խօսուի, կը պատկանէր ուրիշ ցեղի մը, որուն անդամներէն ո՛չ ոք քահանայութեան պաշտօնը ստանձնեց երբեւիցէ: Արդ, յայտնի է թէ մեր Տէրը Յուդայի ցեղէն էր, մինչդեռ այդ ցեղէն գալիք քահանայութեան մը մասին Մովսէս ոեւէ բան չըսաւ:

Փոփոխութիւնը աւելի բացորոշ է անով՝ որ կը յայտնուի քահանայ մը որ Մելքիսեղեկի նման է. այսինքն՝ մարմնաւոր կեանքի յատուկ օրէնքներու եւ կարգերու համաձայն չէ՛ որ քահանայ եղած է, այլ՝ յաւիտեանական կեանքի մէջ ի զօրու եղող օրէնքով: Անոր մասին վկայեց սաղմոսագիրքը,

ըսելով. “Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեդեկին պէս”: Բացայայտ է, թէ նախկին պատուիրանը մէկդի կը դրուի, անզօր եւ անօգուտ ըլլալուն համար, որովհետեւ Օրէնքը չկրցաւ ոեւէ բան կատարելութեան հասցնել. եւ հիմա աւելի լաւ յոյս մը տրուեցաւ մեզի, որով Աստուծոյ կը մօտենանք:

Աւելին, այս նոր քահանայութիւնը երդումով տրուեցաւ, մինչդեռ միւսներուն քահանայութիւնը երդումով տրուած չէ: Քրիստոս քահանայ եղաւ Աստուծոյ երդումով, ինչպէս սաղմոսագիրքը կ'ըսէ.

“Տէրը անդառնալի երդումը ըրաւ, ըսելով. –

Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեդեկին պէս”:

Եւ այսպէս, Յիսուս գերազանց ուխտի մը երաշխաւորը եղաւ: Ի վերջոյ, միւս քահանաները թիւով շատ կ'ըլլային,

որպէսզի մէկուն կամ

միւսին մահով

քահանայութիւնը

չընդհատուէր: Բայց

որովհետեւ Յիսուս

յաւիտեան կ'ապրի,

իր քահանայութիւնն

ալ անվախճան է:

Ուստի նաեւ կրնայ վերջնականապէս փրկել անոնք որոնք իր միջոցաւ Աստուծոյ կու գան, որովհետեւ միշտ կենդանի ըլլալով՝ տեւաբար բարեխօս կ'ըլլայ անոնց համար:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(19.11-28)

Մինչ ժողովուրդը անոր ըսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով որ ժողովուրդը կը կարծէ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց. –

«Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախքան մեկնելը, կանչեց իր տասը ծառաները եւ իւրաքանչիւրին

հարիւր արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ. “Շահարկեցէ՛ք այս դրամը մինչեւ վերադարձս”:

Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք. հետեւաբար պատգամաւոր

դրկեցին իր ետեւէն, ըսելով. “Չեմք ուզեր

որ ան մեր վրայ թագաւոր դառնայ”:

Երբ որ ազնուականը թագաւորական

իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ,

անմիջապէս կանչեց իր ծառաները, որոնց

դրամ տուած էր, գիտնալու համար թէ ի՛նչ

շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. “Մէկ

տուածիդ դէմ տասը շահեցայ”:

Տէրը ըսաւ. “Ապրի՛ս, բարի ծառայ, քանի այդ փոքրիկ

բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա

քեզ տասը քաղաքներու վրայ կառավարիչ

պիտի նշանակեմ”:

Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. “Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ”:

Տէրը ըսաւ. “Քեզ ալ հինգ քաղաքներու վրայ

կառավարիչ կը նշանակեմ”:

Երրորդը եկաւ եւ ըսաւ. “Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ,

զայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած:

Կը վախնայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ

մըն ես: Կ'առնես ինչ որ քուկդ չէ եւ կը

հնձես ինչ որ չես սերմանած”:

Տէրը անոր ըսաւ. “Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի

դատեմ: Քանի գիտէիր որ կ'առնեմ ինչ որ

իմս չէ եւ կը հնձեմ ինչ որ չեմ սերմանած,

ինչո՞ւ ուրեմն դրամս սեղանաւորներուն

չտուիր, քանի գիտէիր

նաեւ թէ վերադարձիս

զայն տոկոսով միասին

պիտի պահանջէի”:

Ապա սպասուողներուն ըսաւ. “Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէ՛ք տուէ՛ք անոր որ տասնապատիկը շահած է”:

Անոնք ըսին. “Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի”:

“Գիտցէ՛ք, – ըսաւ ան, – ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չեն ուզեր որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէք եւ իմ ներկայութեանս սպաննեցէ՛ք զանոնք”»:

Այս խօսքերը ըսելէ ետք Յիսուս շարունակեց իր ճամբան դէպի Երուսաղէմ:

որովհետեւ Յիսուս յաւիտեան կ'ապրի, իր քահանայութիւնն ալ անվախճան է:

ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած ամենէն փոքր բաժինն ալ:

ՅԻՄՆԱԿԻ Ձ ԿԻՐԱԿԻ
(ԾԻԱԿԱՆ ԵՒ ԿՐՈՒԱԿԱՆ
ԲԱՅՁՏՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԹԻ 35)

ԼԵ

ՏՆՕՐՀՆԷՔԻ ԱՓՄՆԴՈՒԹԵԱՆ ՀՈՒՐՁ

Կ'ապրինք ժամանակներու մէջ, ուր աւանդուածութիւնները կորսուելու վրայ են: Այս առիթով աւանդուածութիւններու արժէքին մասին պիտի չխօսիմ անշուշտ, բայց կ'ուզեմ արձանագրել, թէ անոնք միշտ ալ ծառայած են հաւաքական ոգիի եւ գիտակցութեան բարեկարգ պահպանման:

Որեւէ աւանդութիւն կտակ մըն է, եւ եթէ անիկա այսօր մեզի չի խօսիր՝ յանցանքը անորը չէ: Ըսել չեմ ուզեր, թէ յանցանքը մերն է, բայց արդար պիտի ըլլայ յայտարարել, որ գոնէ ինչ-ինչ պատճառներով մերն է անկարողութիւնը՝ զայն վերարժեւորելու, այլ բացատրութեամբ մը՝ զայն վերստին բերելու մեր կեանքերուն մէջ՝ իբր ժողովող գործութիւն, իբր անշրջանցելի աղբիւր մը՝ հաւատքի ժողովուրդը վերանորոգելու:

Կ'ուզեմ աւելցնել, թէ ինչպէս ամէն արարողութեան՝ նաեւ Տնօրհնէքի պարագային քահանան պէտք է իր պարտականութիւնը կատարէ առանց որեւէ ակնկալութեան, այն հաւատքով որ Աստուած արդէն կը հոգայ իր ընտանիքին եւ իր կարիքները, քանի կը լսէ իր սրտի աղօթքը. «Դու գիտես զպէտս մեր առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք»:

Տնօրհնէքի աւանդութիւնը: Քանի մը միտքեր.

1.- Տունը առաջին եկեղեցին է: Առանց տուն-եկեղեցիին՝ եկեղեցի-եկեղեցին չի կրնար գոյութիւն ունենալ: Տուն-եկեղեցին աղօթքի առաջին հաւաքական միաւորն է:

Եկեղեցի-եկեղեցին երկրորդ եւ աւելի մեծ ընտանիքի մը եկեղեցին է, հաւատքի համայնքի մը կամ ժողովուրդի մը եկեղեցին է:

Ինչպէս առանց տուն-եկեղեցիին չի կրնար եկեղեցի-եկեղեցին գոյութիւն ունենալ, նոյնպէս առանց եկեղեցի-եկեղեցիին չի կրնար տուն-եկեղեցին գոյութիւն ունենալ: Եկեղեցի-եկեղեցիին տկարացումը՝ տուն-եկեղեցիին տկարացումն է, եւ փոխադարձաբար:

Եկեղեցի-եկեղեցին իր մէջ կը հաւաքէ կամ ժողովէ բոլոր տուն-եկեղեցիները: Բայց ինչպէ՞ս:

Առաջին. Աստուծոյ Հոգիին ներգործութեամբ: Աստուծոյ Հոգին է, որ եկեղեցի կը ստեղծէ:

Անիկա մարդկային կեանքին մէջ կը ներգործէ տուեալ աւանդութեան մը կամ մշակոյթի մը սահմաններուն ճամբով: Այլ բացատրութեամբ մը, մենք չենք կրնար հասկնալ Աստուծոյ Հոգիին ներգործութիւնը մեր ունեցած աւանդութեան եւ մշակոյթի սահմաններէն անկախաբար: Ըսել չեմ ուզեր, թէ Աստուծոյ Հոգին աւանդութեան եւ

մշակոյթին մէջ կը սահմանափակուի: Ո՛չ: Անիկա անոնց մէջ կու գայ եւ զանոնք կ'անդրանցնի, անոնց վերանորոգումը եւ վերանորոգիչ ըլլալը կարելի կը դարձնէ:

Երկրորդ. Որպէսզի Աստուծոյ Հոգին ներգործէ՝ մարդկային հոգիները բաց պէտք է ըլլան անոր:

Հոն ուր Աստուծոյ Հոգիին ներգործութիւնը կայ՝ հոն հաւատացեալներուն ժողովումը կարելի կ'ըլլայ:

2.- Տնօրհնէքը տան անդամները կը ժողովէ եւ անոնց եկեղեցի մը ըլլալը կը հաստատէ:

3.- Քահանային ներկայութիւնը: Անիկա Քրիստոսի ներկայացուցիչն է, որ ինքզինք անարժան կը համարէ այդ պատիւին:

Մեր առօրեային մէջ մենք շատ լաւ գիտենք, թէ ի՞նչ կը նշանակեն ընտանեկան փոխայցելութիւնները: Երբ մէկը իր տունը կը հրաւիրէ, վերջն ալ դուն պարտք կը համարես զինք տունը հրաւիրել, եւ ան ալ պարտք պէտք է համարէ տունը գալ... նոյնպէս երբ տուն մը եկեղեցի կու գայ, եկեղեցւոյ ծառայութեան կոչուած քահանան ալ պարտք պէտք է համարէ այդ տունը երթալ...

4.- Տնօրհնէքը կախարդութիւն մը չէ:

«Օրհնել» բայը քանի մը իմաստներ ունի. կը նշանակէ՝ բարեբանել, գովել, մաղթել կամ բարին կամենալ, սուրբ եւ նուիրական համարել եւ ընել:

Տնօրհնէքի ատեն սեղանին վրայ կը բերուին ջուր, աղ եւ հաց: Երբ քահանան կ'աղօթէ անոնց վրայ կախարդական բաներ չ'ըսեր եւ կախարդական երգեր չ'եղանակեր: Այլ ինչ որ կ'ըսէ եւ ինչ որ կ'երգէ Աստուածակեդրոն խօսքեր եւ երգեր են: Անոնցմով Աստուած կը փառաբանուի, Աստուծոյ մեր կեանքին մէջ յայտնութեան իմաստը կը յայտարարուի, Անոր պատգամը կը հռչակուի, քրիստոնէական յանձնառութեան մէջ մնալու կոչը կ'ուղղուի:

5.- Ջուրը օրհնել: Ջուրը խորհրդանշանն է կեանքի: Ըստ Աւետարանին՝ յաւիտեանական կեանքի ջուրը տուողն է Քրիստոս: Այսինքն՝ Քրիստոսի միջոցով մենք Աստուծոյ հետ նոր յարաբերութեան մը մէջ կը մտնենք:

Երբ քահանան պարզ ջուրին վրայ խաչին նշանը կ'ընէ, այդ պարզ ջուրը կը խորհրդանշէ Քրիստոսի տուած ջուրը: Եւ Քրիստոսի տուած ջուրը բարի է, գովելի է, մարդոց համար բարին կը կամենայ, սուրբ եւ նուիրական է, որովհետեւ սուրբ եւ նուիրական կը դարձնէ մարդկային կեանքը:

Աղը օրհնել: Ըստ Զարեհ արք. Ազնաւորեանի, աղը չորս նշանակութիւններ ունի: Կը նշանակէ համ տուող ըլլալ, մաքրող ըլլալ, պահպանող ըլլալ եւ հաւատարիմ ըլլալ:

Համ տուող ըլլալ: Յիսուս զինք լսողներուն

Երբ տուն մը եկեղեցի կու գայ, եկեղեցւոյ ծառայութեան կոչուած քահանան ալ պարտք պէտք է համարէ այդ տունը երթալ...

Աստուծոյ Հոգին է, որ եկեղեցի կը ստեղծէ:

եւ իրեն հաւատացողներուն կ'ըսէր, թէ իրենք մարդկութեան համ տալու կոչուած են: Այսինքն՝ անոնք կանչուած են մարդոց կեանքին իմաստ եւ նշանակութիւն բերելու, անոնց գոյութեան նպատակ տալու:

Մաքրող ըլլալ: Աստուածաշունչը կ'ըսէ, որ մարդը ստեղծուած էր Աստուծոյ պատկերին նմանութեամբ, սակայն իր անհնազանդութեան պատճառով կորսնցուցած էր այդ նմանութիւնը եւ մեղքերու ցեխին մէջ մխրճուած կ'ապրէր: Յիսուս իր հետեւորդները կը հրաւիրէ այն ցեխէն դուրս հանելու կամ մաքրելու մեղաւոր մարդկութիւնը:

Պահպանող ըլլալ: Յիսուսի առաքեալները ընտրուելէ առաջ երկու վիճակներու մէջ նկարագրուած են. ձուկ որսալու համար՝ ուռուկանը ջուր նետելու վրայ. եւ ուռուկան կարկտելու կամ կարգի դնելու վրայ: Առաջինը կը նշանակէ՝ անհաւատ մարդոց մէջ որսալով երկինքի արքայութեան ժառանգորդներ հաւաքել կամ Աստուծոյ համար մարդիկ շահիլ, եւ երկրորդը՝ վերանորոգելու կամ պահպանելու կամ եկեղեցին բարեկարգ պահելու իմաստը ունի:

...Համ չտուող, չմաքրող, չպահպանող կամ չվերանորոգող եւ անհաւատարիմ ժողովուրդ մը չի կրնար Աստուծոյ ժողովուրդ մնալ եւ ըլլալ:

Պահպանող ըլլալը՝ Աստուծոյ հաւատարիմ ըլլալն է: Իսկ ինչպէ՞ս կը դրսեւորուի հաւատարմութիւնը:

Աստուծոյ պատուիրանները կատարելով կամ Աստուծոյ կամքին հնազանդութեամբ:

...Համ չտուող, չմաքրող, չպահպանող կամ չվերանորոգող եւ անհաւատարիմ ժողովուրդ մը չի կրնար Աստուծոյ ժողովուրդ մնալ եւ ըլլալ:

Երբ քահանան պարզ աղին վրայ խաչի նշանը կ'ընէ, օրհնեալ աղը այս ամբողջ նշանակութիւնը կը ստանայ, որ բարի է եւ գովելի, քանի որ բարեք գործելու ոգին կը գօրացնէ, եւ սուրբ ու նուիրական կը դարձնէ մարդկային կեանքը:

Հացը օրհնել: Աւետարանին մէջ հացը Յիսուս-կերակուրն է, երկնային մանանան: Անիկա «յաւիտենական կեանքին մէջ կը մնայ» կամ «կեանք կու տայ»:

Յիսուս Վերջին Ընթրիքին հացը բեկանելով ըսաւ, թէ անիկա իր մարմինն է: Արդ, երբ քահանան խաչ կը հանէ հացին վրայ, այդ հացը կը խորհրդանշէ Յիսուսի մեզի տուած կերակուրը, որ իր խաչեալ մարմինն է: Ան որ «կը ճաշակէ» այդ մարմինէն կամ ան որ այդ մարմինի խորհուրդին կը հաղորդուի՝ գիտէ թէ ի՞նչ կը նշանակէ եկեղեցի ըլլալ... գիտէ թէ եկեղեցին հացի պէս բաշխուելու համար է:

6.- Տնօրհնէքով տունը-եկեղեցին եւ եկեղեցի-եկեղեցին իրենց փոխադարձ պատասխանատուութիւնը կը վերանորոգեն:

Հովիւ
Գ.Ք

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԽՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

Ե ԳԼՈՒԽ

ՈՒՍՈՒԾՈՒՄ ԸՆՈՒԹԵԱՆ ԱԵԱՐԵ:

«Լսեր էք որ ըսուած է. «Մի՛ շնար»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ո՛վ որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աչ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ եւ նետէ՝ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներէդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմինով դժոխք նետուիս: Եթէ աչ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ եւ նետէ՝ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներէդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմինով դժոխք նետուիս» (27-30):

«Մի՛ շնար»ը տասը պատուիրաններէն մէկն է: Ի՞նչ է Յիսուսի բերած լրացումը այս պատուիրանին:

Շնութեան մասին խօսողը ինքնաբերաբար պէտք է խօսի ամուսնութեան մասին: Ի՞նչ է ամուսնութեան իսկական կոչումը: Ինչպէ՞ս կը սկսի ամուսնութիւնը:

Միութեամբ:

Ինչպէ՞ս կ'ըլլայ այդ միութիւնը: Ամուսնութեան միութիւնը սոսկ մարմնական միութիւն չէ:

Յիսուս ապահարգանի մասին խօսելով կ'ազնարկէ ստեղծագործութեան դրուագի այն տարրին, որ կը պատմէ, թէ Աստուած կինը կը ստեղծէ եւ զայն այդ մարդուն կը բերէ: Եւ այրը կը ճանչնայ, թէ անիկա իր մարմինէն եւ ոսկորներէն է, այսինքն՝ կը տեսնէ անոր կատարեալ նմանութիւնը իրեն: Ապա կ'ըսէ. «Այսուհետեւ այրը պիտի ձգէ իր հայրը եւ մայրը եւ իր կնոջ պիտի յարի ու մէկ մարմին պիտի ըլլան» (Ծն 2.24): Պատմուածը նախահօր եւ նախամօր ստեղծումին կը վերաբերի, ուրեմն տակաւին հայր կամ մայր չկար, բայց հետաքրքրական է, որ այդ մասին կը խօսուի: Ինչո՞ւ: Ապագային համար պատուէր մըն է տրուածը: Ամէն այր եւ ամէն կին որ կը միանան իրարու՝ միութիւն մը կը կազմեն, այսինքն՝ անկախ միաւոր մը: Պատուէրին մէջ հայրը եւ մայրը լքելու եւ անոնցմէ հրաժարելու խօսք չէ որ կ'ըլլայ,

այլ կը թելադրուի այրի եւ կնոջ միութեամբ ստեղծուած անկախութեան: Անոնք մէկ մարմին կը կազմեն:

Իսկ ի՞նչ կը նշանակէ «մէկ մարմին» հասկացողութիւնը:

Աւելորդ է ըսել, թէ ֆիզիքական մարմինի մասին չէ խօսքը: Այլ անով ըսել կ'ուզուի, թէ երկու անձեր իրենց տարբեր հոգեկան աշխարհներով եւ տարբեր մտածողութեամբ կու գան եւ կը միաւորուին եւ կը դառնան մէկ: Ամուսնական միաւորումը Աստուծոյ կամքով եւ հաճութեամբ կ'ըլլայ. Աստուած ինքն է, որ երկու տարբեր անձեր իրարու կը միացնէ եւ անոնց միութիւնը կը ստեղծէ: Այդ պատճառով ալ Յիսուս կ'ըսէ. «...տեւէ մէկը թող չբաժնէ անոնք՝ որ Աստուած միացուց» (Մտ 19.6):

«...տեւէ մէկը թող չբաժնէ անոնք՝ որ Աստուած միացուց»

Առանց հաւատարմութեան՝ ամուսնական միութիւնը չի պահպանուիր:

Այդ միութեան պահպանման համար կարեւոր պայման է հաւատարմութիւնը: Որպէսզի գոյգ մը միացած մնայ՝ փոխադարձաբար հաւատարիմ պէտք է ըլլան այրը եւ կինը: Առանց հաւատարմութեան՝

ամուսնական միութիւնը չի պահպանուիր:

Անոր պահպանման համար այլ պայման է հնազանդութիւնը: Պօղոս առաքեալ Եփեսոսցիներուն ուղղած իր նամակին մէջ այս կոչը ըրած է այրերուն եւ կիներուն. «Քրիստոսի հանդէպ ձեր պատկառանքը արտայայտեցէք՝ իրարու հնազանդելով» (Եփ 5.21): Ուրեմն, միաւորուած գոյգի մը փոխադարձ հնազանդութիւնը՝ պատկառանքի արտայայտութիւն է Աստուծոյ Որդիին, հետեւաբար նաեւ Անոր՝ որ գայն առաքեց:

Արդ, այս ծիրէն դիտելով՝ ի՞նչ է շնութիւնը:

Շնութիւնը խախտումն է հաւատարմութեան: Հին հասկացողութեամբ՝ շնութիւնը մարմնական մոլորութիւն էր: Այսինքն՝ երբ հիները շնութիւն կ'ըսէին՝

կը հասկնային միաւորեալ գոյգի մը մէկ անդամին մարմնական ցանկութեան յագեցումը՝ իր կողակիցէն զատ ուրիշի մը հետ:

Յիսուս կու գայր սելու, թէ շնութիւնը միայն մարմնական այն մոլորութիւնը չէ: Երբ մէկը անհաւատարմութեան

աչքով կը նայի ուրիշի մը կնոջ կամ այրին՝ արդէն իսկ շնացած կ'ըլլայ:

Կրնա՞յ հարց տրուիլ, թէ ի՞նչ սխալ կայ այդ տեսակ նայելուն մէջ: Եղած չեղածը՝ նայուածք մըն է: Կարելի՞ է չնայիլ: Կամ կարելի՞ է չտեսնել: Հարցը պարզ նայելուն կամ տեսնելուն մասին չէ, այլ ցանկութեամբ նայելուն: Հարցը կը վերաբերի տարփալից ցանկութեան:

Հարցը պարզ նայելուն կամ տեսնելուն մասին չէ, այլ ցանկութեամբ նայելուն: Հարցը կը վերաբերի տարփալից ցանկութեան:

Ցանկութիւն բառը միայն մէկ իմաստ չունի: Անիկա միայն սեռային մոլոր մղու-մին կապուած չէ: Ցանկութիւն բառը շատ լայն գործածութիւն ունի եւ միշտ չէ, որ ժխտական նշանակութեամբ կ'առնուի կամ կը կիրարկուի:

Ցանկութիւնները մարդուն մէջ բնական են: Աստուած է, որ մեր մէջ դրած է բոլոր տեսակի ցանկութիւնները, եւ անոնք նոյնիսկ անհրաժեշտ են մեր գոյութեան համար: Եթէ ուտելու ցանկութիւնը չըլլայ մէջս՝ մարմինը ինքզինք սնանելու պահանջը չգտար եւ կրնայ առանց սնունդի մնալով տկարանալ ու կորսուիլ: Նոյնը կը վերաբերի խմելուն եւսյլն եւսյլն: Բոլորն ալ ձեռով մը մարմինին պաշտպաններն են, կամ միջոցներն են կեանքը ապրելու: Նոյնն է հետեւաբար ամուսնական ցանկութիւնը: Անիկա մարդուն մէջ բնական ցանկութիւն է այնքան ատեն՝ որ կը ծառայէ իբր միջոց մարդկային տեսակը պահպանելու եւ անոր գոյատեւումը ապահովելու:

Ե՞րբ է որ ցանկութիւն մը բարի կ'ըլլայ եւ ե՞րբ չար, կամ այլ բացատրութեամբ մը. ե՞րբ է որ ցանկութիւն մը օրինաւոր կ'ըլլայ, եւ ե՞րբ ոչ-օրինաւոր, հետեւաբար՝ թոյլատրելի եւ անթոյլատրելի:

Որեւէ ցանկութիւն որ կը մնայ իր բնական

սահմանին կամ չափաւորութեան մէջ՝ բարի է, հետեւաբար օրինաւոր եւ թոյլատրելի: Երբ որ իր բնական չափը կ'անցնի՝ կը դառնայ չար, հետեւաբար ոչ-օրինաւոր եւ անթոյլատրելի: Որեւէ ցանկութեան չափազանցումը շեղում է: Օրինակ առնենք «Մեղայ»ի մոլութիւնները: Ի՞նչ են մոլութիւնները: Այն ցանկութիւններն են անոնք՝ որ իրենց բնական չափէն դուրս ելած են: Երբ կ'ըսենք որկրամոլութիւն, կը հասկնանք ուտելու ցանկութեան չափազանցումը: Ամէն չափազանցութիւն մարմինին կը վնասէ, եւ մարմինին վնասը մարդուն ամբողջութեան հասցուած վնաս է:

Իւրաքանչիւր անձ իր սրտին, իր նկարագրին եւ իր մտայնութեան համապատասխան անձը պէտք է գտնէ կամ ինչպէս կ'ըսենք՝ իր զոյգը պէտք է գտնէ, եւ անոր հետ կազմէ այն միութիւնը, որ Աստուած կը կամենայ:

Արդ, ամուսնական ցանկութիւնը նոյնքան օրինաւոր է կամ նոյնքան թոյլատրելի, բայց այն սահմանին մէջ, որ աստուածադիր կանոնը մեզի կը բերէ, այլ բացատրութեամբ մը. իւրաքանչիւր անձ իր սրտին, իր նկարագրին եւ իր մտայնութեան համապատասխան անձը պէտք է գտնէ կամ ինչպէս կ'ըսենք՝ իր զոյգը պէտք է գտնէ, եւ անոր հետ կազմէ այն միութիւնը, որ Աստուած կը կամենայ:

Այդ միութեան մէջ է, որ օրինաւոր կը դառնայ ամէն կապ եւ ամէն յա-րաբերութիւն: Անկէ դուրս՝ ցանկութիւնը կը դառնայ ապօրինի, հետեւաբար նաեւ դատապարտելի:

Երբայեցիներու նամակին մէջ գրուած է. «Բոլորդ ալ պատուեցէ՛ք ամուսնութիւնը եւ ամուսնական կապը սուրբ պահեցէ՛ք, որովհետեւ Աստուած կը դատապարտէ շնացողներն ու պոռնկութիւն ընողները» (Եբր 13.4):

Առաքեալը ամուսնական կապէն դուրս օրեւէ յարաբերութիւն շնութիւն եւ պոռնկութիւն կը կոչէ, եւ կ'աւելցնէ, թէ այդ յարաբերութիւնը Աստուծոյ կողմէ կը դատապարտուի:

Հետեւաբար, աչքին տեսնելը չէ հարցը, այլ այն ցանկութիւնը՝ որուն տեղ կու տայ մարդը իր սրտին մէջ: Սրտին մէջ տեղ գտած

ցանկութիւնը մնայուն կերպով կը փայտալայտայ երազը, որ շնութեան արարքի իրականացման կը ձգտի: Այդ արարքը իրականանայ կամ ոչ, ըստ Յիսուսի՝ շնութիւնը արդէն կատարուած է: Ուրեմն, Յիսուս շնութիւնը արմատէն կը դատապարտէ, որպէսզի մարդը իր առօրեայ կեանքին մէջ զգուշանայ: Երբ մէկը կը զգայ որ շնութեան ցանկութիւնը կը սկսի տեղ գրաւել իր սրտին մէջ, անմիջապէս զայն արմատախիլ պէտք է ընէ: Այս առնչութեամբ է, որ Յիսուս պատկերաւոր սա բացատրութիւնները տուած է. «Եթէ աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ եւ նետէ՛ զայն եւայլն», «Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ եւ նետէ՛ զայն եւայլն»: Ինչպէ՞ս հասկնալ այս խօսքերը: Ըսի արդէն, թէ ասոնք պատկերաւոր բացատրութիւններ են: Պէտք չէ բառացիօրէն առնել: Յիսուսի միտք բանին այն է, որ շնութեան ցանկութիւնը պէտք է արմատախիլ ընել մեր մէջէն:

Ժամանակ կար երբ մարդիկ իրենց հոգեւոր փրկութիւնը շատուրջիկ՝ առնէին: Այսօրուան աշխարհին մէջ կը թուի, թէ մարդիկ այդպէս չեն առներ: Երբ որ կը խօսիս հոգիի փրկութեան մասին, կարծես թէ անկարեւոր բանի մը մասին կը խօսիս. ժամանակակից մարդուն համար արտաքին յարաբերութիւնները եւ յաջողութիւնները շատ կարեւոր են քան Աստուծոյ հետ իր յարաբերութիւնը եւ անոր մէջ իր աճումը: Սակայն Աստուծոյ աչքին մարդ էակի հոգեւոր փրկութիւնը առաջնային տեղ ունի: Ուստի, մարդ էակին համար եւս, առաջնայինը պէտք է ըլլայ իր հոգեւոր փրկութիւնը: Յիսուս ըսած է. «Ի՞նչ օգուտ, եթէ մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ» (Մտ 16.26):

Արդ, եթէ մեր կեանքին մէջ բաներ կան որոնք մեր փրկութիւնը կը խափանեն, պէտք է զանոնք նշտրակի պէս կտրել, ինչպէս բժիշկը վէրք մը կը կտրէ, կամ ձեռք մը կամ ոտք մը կը կտրէ, որպէսզի ամբողջ մարմինը հիւանդութեամբ չվարակուի եւ չփճանայ:

Այս երկար բացատրութենէն ետք՝ հաստատենք, որ շնութիւնը մարդիկը անսրբութեան կ'առաջնորդէ: Չայն պէտք է արմատախիլ ընել զոյգի մը կեանքէն, որպէսզի ընտանիքը մաքուր մնայ: Մաքուր ընտանիքն է, որ Աստուծոյ տեսութենէն չի զրկուիր:

Շնութիւն չգործելու պատուէրին անմիջապէս կապուած է ապահարգանի հարցը:

ՈՒՍՈՒՅՈՒՄ ԱՊՈՍՏՈՍԱՆԻ ՄԱՍԻՆ:

«Ըսուած է.- Ով որ իր կիներ կ'արձակէ, անոր արձակման բուրք բող տայ:

Իսկ ես կ'ըսեմ ձեզի.- Ան որ առանց պոռնկութեան պատճառի իր կիներ կ'արձակէ, ինք պատճառ կը դառնայ անոր շնութիւն ընելուն: Նոյնպէս, շնութիւն ըրած կ'ըլլայ ան՝ որ կ'ամուսնանայ արձակուած կնոջ հետ» (31-32):

Առաջին հարցումը. Մովսէս այս հարցին մասին ո՞ւր գրած է: Բ. Օր 24.1-4-ին մէջ կը կարդանք. «Եթէ մէկը կին մը առնէ ու ամուսնանայ եւ անոր վրայ անարգութեան բան մը գտնելուն համար անիկա իր աչքին հաճոյ չըլլայ, այն ատեն անոր արձակման թուղթ մը թող գրէ ու անոր ձեռքը տայ եւ իր տունէն ճամբէ: Երբ կինը անոր տունէն ելլելով երթայ ուրիշի մը հետ ամուսնանայ, եթէ երկրորդ այրն ալ զանիկա ատելով արձակման թուղթ մը գրէ ու անոր ձեռքը տալով՝ իր տունէն ճամբէ, կամ եթէ երկրորդ ամուսինը մեռնի, առաջին ամուսինը որ զանիկա ճամբեր էր, պէտք չէ դարձեալ անոր հետ ամուսնանայ, անոր պղծուելէն հետքը. քանզի Տիրոջ առջեւ պղծութիւն է այս բանը»:

Այս քաղուածքին մէջ երկու կարեւոր բաներ կան.-

Ա.- Մովսիսական օրէնքը կը թոյլատրէ, որ մէկը իր կինը արձակէ, երբ անոր վրայ տեսնէ «անարգութեան բան մը»:

Բ.- Ըստ օրէնքին, երբ արձակուած կինը ուրիշի հետ ամուսնանայ, եւ դարձեալ անոր կողմէ ալ արձակուելի՝ չի կրնար առաջինին հետ վերամուսնանալ: Եթէ առաջին ամուսինը վերամուսնանայ իր արձակած կնոջ հետ, որ ուրիշի մը հետ ամուսնացած եւ անկէ ալ արձակուած է կամ այրի մնացած է անկէ, այն ատեն պղծութիւն կամ շնութիւն ըրած կ'ըլլայ:

Թէ ի՞նչն է, որ «անարգութեան բան» կը համարուէր:

Յիսուսի ժամանակակից ուսուցիչներ երկու դպրոցներ կային, մէկը ուսուցիչներ էին, միւսը՝ ուսուցիչ Նաւաթի դպրոցը:

Հիւլէր «անարգութեան բան»ին մէջ շատ

լայն աշխարհ մը կը տեսնէր: Եւ նոյնիսկ մինչեւ անհետեւի հասնող միտքով մը կ'ըսէր՝ թէ երբ մէկը իր կնոջ մէկ արարքը, մէկ խօսքը, եփած մէկ ճաշը, մէկ վարմունքը չհաւնի, ատիկա իր աչքին «անարգութեան բան» է, եւ ուստի կրնայ կինը արձակել:

Իսկ ուսուցիչ Նաւաթի «անարգութեան բան»ին մէջ կը տեսնէր միայն ամուսնական անհաւատարմութիւնը կամ շնութիւնը:

Ուրեմն, «անարգութեան բան»ին մասին Յիսուսի հասկացողութիւնը ուսուցումին համաձայն էր: Յիսուս համաձայն չէր արձակման, բացի այն պարագայէն՝ երբ պոռնկութեան պատճառ կար:

«...շնութիւն ըրած կ'ըլլայ ան՝ որ կ'ամուսնանայ արձակուած կնոջ հետ»:

Ի՞նչ է ըսել ուզուածը: Սեպենք որ այր մը արձակուած կին մը կ'ուզէ առնել, շնութիւն ըրած կ'ըլլայ:

Յիսուսի խօսքը հասկնալի կ'ըլլայ այն ատեն, երբ մենք նկատի ունենանք Բ. Օրէնքի գիրքէն քիչ առաջ մեր քաղած հատուածին հետեւեալ բաժինը. «Երբ կինը անոր (այսինքն՝ արձակողին - Գ.Բ) տունէն ելլելով երթայ ուրիշի մը հետ ամուսնանայ, եթէ երկրորդ այրն ալ զանիկա ատելով արձակման թուղթ մը գրէ ու անոր ձեռքը տալով՝ իր տունէն ճամբէ, կամ եթէ երկրորդ ամուսինը մեռնի, առաջին ամուսինը որ զանիկա ճամբեր էր, պէտք չէ դարձեալ անոր հետ ամուսնանայ, անոր պղծուելէն հետքը. քանզի Տիրոջ առջեւ պղծութիւն է այս բանը»:

Յիսուսի խօսքը Մովսիսական օրէնքէն շեղում չէ, սակայն նաեւ անկէ անդին ալ կ'անցնի:

Յիսուս արձակուած կնոջ ուրիշ այրի մը հետ ամուսնութեան արգելք մը չի յայտարարեր, որովհետեւ անոր առանց ամուսնութեան մնալը՝ յաւելեալ չարիքի պատճառ կրնայ ըլլալ, մանաւանդ եթէ շատ երիտասարդ կին է: Լաւ է, որ ան օրինաւոր ամուսին մը ունենայ քան թէ անօրէնութեան մէջ ըլլայ:

Յիսուս համաձայն չէր արձակման, բացի այն պարագայէն՝ երբ պոռնկութեան պատճառ կար:

Ա Մ Ա Ն Ո Ր

ԱՌԱՎՈՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ
Հինգշաբթի, 1 Յունուար 2009,
Առաւօտեան ժամը 11.00–ին:

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Յ

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ
ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Երկուշաբթի, 5 Յունուար 2009,
Երեկոյեան ժամը 5.00–ին:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
Երեկոյեան ժամը 6.30–ին:
ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ

ԱՐԺ. Տ. ԳԱՌՆԻԿ ԲՀՆՅ.
ԳՈՅՈՒՆԵԱՆ
(ՀՈՎԻՒՒ)

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐԸ
ԿԸ ԿԱՏԱՐԵՆ՝

*Խշիշեան Բաֆֆի, Այէմեան Մանուկ,
Դաւիթեան Բաֆֆի, Մալոյեան Սասուն,
Իսրայիլեան Ալինա, Յարութիւնեան Մելիսա,
Փասպար Թալին, Իսրայիլեան Լինէթ,
Տէմիրճեան Ռուպինա, Քիւլլիւքեան Սերենա,
Տէմիրճեան Թամար, Գլընճեան Դալար,
Գոյունեան Մաշտոց, Գոյունեան Կորիւն,
Պապիկեան Արէն, Պարթեւեան Արամ, Պարթեւեան
Ճէսիքա, Պապիկեան Սեւակ:*

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհներ փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
թիւին,
կամ՝ 514 909 5203 թիւին:

**ՏՕՆ ԾԱՆԴԵԱՆ
ԵՒ
ՅԱՅՏԱՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌԱ ՄԵՐՈՂ
ՅԻՄՈՒԻՒ ԲՐԻՍՏՈՒԻ**

ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
ԱՌԱՎՈՏԵԱՆ ԺԱՄԸ 9.30

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ
ԵՒ
ԿԸ ՊԱՏԳԱՍԷ

**ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԷՆ Ս. ԱՐՔ.
ԳԱԹԱՐՈՅԵԱՆ
(ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒՉ)**

Երեքշաբթի, 6 Յունուար 2009
Առաւօտեան ժամը 11.00

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Չորեքշաբթի, 7 Յոհնոս 2009
ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ԺԱՄԸ 11.00